ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Յունվարի 12-ին, Թ. 5. Սինոդը լսելով Գանձակի փոխանորդի անցեալ դեկտեմբերի 2-ի, №54 յայտարարութիւնը Ս. Թարգմանչաց վանքի գրադարանի մասին, որոշեց՝ յանձնարարել Գանձակի փոխանորդին, յիշեալ գրադարանի ձեռագրերը ուղարկել Մ. Աթոռ, գիւղական դպրոցի յարմար գրքերը տալ Բանանց գիւղի հայոց դպրոցին, իսկ միւս ծանրակշիռ գրքերը յանձնել Գանձակի Ս. Յովհաննէս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիների ծխական դպրոցների գրադարաններին։

Յունվարի 12-ին, Թ. 6. Սինոդը լսելով Վեհ. Հայրապետի մակագրութիւնը որոշեց. ընդունել Արշակ Դաւթեանին հոգևոր կոչման մէջ իբրև Ս. Էջմիածնի միաբան և պատուիրել Սինոդիս գանձապահին վճարել նրան հանդերձագին և անդագրամ այս յունվարի 1-ից ամսական 30 ռուբլի։

Յունվարի 12-ին, Թ. 12. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի անցեալ հոկտեմբերի 30-ի № 7554 յայտարարութիւնը, որոշեց՝ թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային պայման կապել Երևանցի Սիսակ Մանասեանի հետ, Աթոռապական Զօրավարի այգին նրան վեց տարով կապալով տալու համար տարեկան 650 ռ. վարձով։

Յունվարի 24-ին, Թ. 18. Սինոդը լսելով Կաղզուանի վերաբնակիչ քրդուհի Խուդրաթ Խալաթեանի խնդիրը՝ որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել քրդուհի Խուդրաթ Խալաթեանին հայ եկեղեցու ծիսով. և հետևանքի մասին յայտնել Սինոդիս։

Յունվարի 17-ին, Թ. 24. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի անցեալ դեկտեմբերի 31-ի № 9212 յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային Գեղարգելի հողերը տալ վարձով Առինջ գիւղի հասարակութեան 5 տարի ժամանակով տարեկան 1700 ռուբլի վարձով։

Յունվարի 19-ին, Թ. 32. Սինոդը լսելով Կարսի փոխանորդ Ուխտանէս վարդապետի այն յունվար ամսի 2-ի յայտարարութիւնը Տ. Տեղակալի անունով, որով խնդրում էր ապաքինուելու համար նշանակել իրան Սանահնի վանքի միաբան, որոշեց՝ Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն Ուխտանէս վարդապետին ազատ համարել Կարսի փոխանորդութեան պաշտօնից և ժամանակաւորապէս կարգել Սանահնի վանքի միաբան, պատուիրելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիային հոգալ Ուխտանէս վարդապետի սննդի մասին և տալ նրան ամսական 25 ռուբլի բժշկութեան ու հանդերձադնի համար։

Յունվարի 19-ին Թ. 33. Սինոդը լսելով Բիւրական գիւղի դպրոցի հոգաբարձութեան անցեալ դեկտեմբերի 13-ի խնդիրը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի դանձապահին յանձնել 100 ռուբլի Սինոդիս ատենադպրին ուղարկելու Բիւրականի դպրոցին իբրև նպաստ։

Յունվարի 21-ին Թ. 42. Սինոդը որոշեց. բոլոր Կոնսիստորիաներին շրջաբերականով պատուիրել և բացատրել, որ 1910 թ. հոկտեմբերի 29-ի շրջաբերականով Սինոդս արգելել է հայ եկեղեցու ծիսով պսակել այլադաւան քրիստոնեաներին, իսկ եթէ պսակուողներից մէկը հայ-լուսաւորչական է և միւսը այլադաւան (բայց ոչ օրթոդոքս), հայ քահանաները կարող են այդպիսիներին պսակել իրանց գրաւոր խնդրի համաձայն։

Յունվարի 24-ին Թ. 46, Սինոդը լսելով Բագուի ա. կարգի վաճառական Աւետիս Բալայեան Ղուկասեանի կտակի գործը, որով հանգուցեալը 60,000 ռուբլի կտակում է Մայր Աթոռին, այն պայմանով, որ այդ դրամագլխի %-ով հայ-լուսաւորչական դաւանութեան պատկանող պատանիներ իրանց ուսումը կատարելագործեն աստուածաբանական և հայկական գիտութիւնների բաժիններում, արտասահմանում՝ որոշեց. նախ ուղարկել պետական դրամատան 1910 թ. հոկտեմբերի 30-ի № 13. 60,000 ռուբլու անդորրագիրը պարտուց չինուցման պետական Ցանձ-

նաժողովին, խնդրելով ուղարկել Սինոդին 4% — արեր մշտական աւանդի տոմս, երկրորդ՝ հանգուցեալ Ղուկասեանի կտակակատար Պ. Մնացական Խունունցից պահանջել յիշեալ 60,000 ռուբ. տոկոսների գումարի գործադրութեան մանրամասն հաշիւը՝ սկսուած կտակի հաստատութեան օրից մինչև այժմ և երրորդ՝ այս գործից քաղուած տալ Սինոդի հաշուարարական մասին։ Այս հաշիւը իւրաքանչիւր տարի տպելով Արարատում մի մի օրինակ այդ Արարատներից ուղարկել կտակակատար Պօղոս Ղուկասեանին և Մնացական Խունունցին։

Յունվարի 26-ին թ. 53. Սինոդը լսելով ի Տ. հանգուցեալ Մաթէոս Բ. Կաթուղիկոսի մահից յետոյ մնացած գոյքի գործը, որոշեց. վեհարանի իրեղէնները յանձնել Սինոդիս անդամ Տ. Մատթէոս վարդապետին հսկելու նոցա պահպանութեանը՝ մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնն ու հաստատութիւնը։

Յունվարի 26-ին թ. 62. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի նախկին ատենադպիր Գաբրիէլ Սմբատեանի խնդիրը, կենսաթոշակ տալու մասին՝ ի նկատի առնելով, որ բացի Սինոդից, հոգևոր տեսչութեան մէջ ծառայողների կենսաթոշակի համար չկայ առանձին դրամագլուխ, իսկ եթէ մի երկուսին տրուել է օժանդակութիւն Մ. Աթոռի միջոցներից՝ այդ եղել է իբրև առանձին շնորհ, որոշեց. Գաբրիէլ Սմբատեանի խնդիրը, նրան կենսաթոշակ տալու մասին, թողնել առանց հետևանքի։

Յունվարի 26-ին թ. 66. Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսի միջնորդութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Դիլիջանի ծխականներին եկեղեցուն պատկանող հին գերեզմանոցում ծառեր տընկել, կառուցանել բաց տեղում շինութիւն գրադարան —ընթերցարանի համար եկեղեցու անունով։

Յունվարի 28-ին թ. 73, Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. օգոստոսի 7-ի № 5527 յայտարարութիւնը, որով մատուցանում է Սինոդին Հին Նախիջևան

քաղաքի բնակիչ Կարապետ Ադամեանի կտակած 600 ռուբ-
լին Մայր Աթոռի և Երուսաղէմի օգտին, որոշեց. պատուի-
րել Մայր Աթոռի գանձապահին Երուսաղէմի օգտին կտա-
կած 300 ռուբ. ուղարկել Երուսաղէմի Պատրիարքական
Տեղապահին, իսկ Մայր Աթոռին հասանելի 300 ռ. արդէն
անցեալ օգոստոսի 13-ին մուտք է գրած Մայր Աթոռի
տոմարում 324 յօդուածով։

Յունվարի 31-ին թ. 82. Զնայելով, որ Սինոդը վիճա-
կային հաստատութեանց համար սահմանում է նախահաշ-
ուով ծախքերի որոշ գումարներ, այնուամենայնիւ, ինչպէս
երևում է կոնսիստորիաների ել և մտից մատեաններից,
նախահաշուից դուրս ծախքեր են լինում առանց Սինոդի
կանխագոյն թոյլատուութեան, Սինոդը որոշեց. շրջաբերա-
կան հրամանով խստիւ պատուիրել բոլոր կոնսիստորիա-
ներին նախ՝ որ ոչ թեմական ատեանները և ոչ հոգևոր
կառավարութիւնները երբեք թոյլ չտան Սինոդի հաս-
տատած նախահաշուից դուրս ծախքեր անել առանց Ատե-
նի կանխագոյն հաճութեան։